

ՀԱՅ ԱԿՈՒՄԲ

ԱՂԵՔՍԱՆԿՐԻԱ

ՀԱՍՏԱՏԵԱԼ 1916

ՀԻՄՆԱԳԻՐ

ԵՒ

ՆԵՐՔԻՆ

ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ



Հ Ի Մ Ն Ա Պ Ի Ր

Հ Ի Մ Ն Ա Գ Ի Ի

# Հ Ա Յ Ա Կ Ո Ւ Մ Բ Ի

ԱՂԵՔՅԱՆԴՐԻԱ



## ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ - ԿԵԴՐՈՆ

Յօդուած Ա. — Հայ Ակումբը՝ հաստատուած 1 մարտ 1916ին, քաղաքային ընկերութիւն մըն է, (Société Civile), որուն կեդրոնատեղին է Մահմուտ փաշա քաղաքի փողոց, թիւ 3:

## Ն Պ Ա Տ Ա Կ

Յօդուած Բ. — 1) Հայ Ակումբին նպատակն է Ազգասանդրիոյ հայ գաղութի անդամներուն միջև ամրապնդել այն ընկերական կապերը որ զիրենք կը միացընեն իրարու և հայրենի երկրին:

2) Ակումբը կը ձգտի նաև գաղութին մտաւորական զարգացման նպաստել, ունենալով իր ընթերցարարանը և սարքերաւար կազմակերպելով զեղարու ետական հանգէսներ, ըստնախօսութիւններ և ներկայացումներ:

3) Ակումբը պիտի կրնայ նաև իր սրահները տրամադրել Առաջնորդարանի կողմէ հանչցուած ազգային

հաստատութիւններու, իր նպատակին յարմարող գրական և գեղարուեստական հանդէսներու և հաւաքոյթներու համար:

4) Ակումբը ս և է քաղաքական նպատակ չունենալով քաղաքական կամ կրօնական վիճարանութիւնք բացարձակապէս արդիւուած են անոր մէջ:

### ԳՐԱՄԱԳԻՈՒԽ - ԲԱԺՆԵՏՈՒՄՆԵՐ

Յօդուած Գ.— 1) Հայ Ակումբի քաղաքային ընկերութեան գրամաղլուխն է 200 եդ. սակի, բաժնուած 50 բաժնետոմսերու, իւրաքանչիւրը 4 եդ. սակի արժէքով:

2) Բաժնետոմսերը սակոս կամ շահաբաժին չունին:

3) Ընկերութիւնը վերջնականապէս հաստատուած կը նկատուի այն օրէն՝ երբ գրամաղլուխին կէսը ստորագրուած և վճարուած է:

4) Տրամադրելի բաժնետոմսերը ստորագրելու առաջնութիւն ունին բաժնետէրերը:

5) Բաժնետէրերը իրենց ստորագրած բաժնեթուղթերու գումարին համար միայն պատասխանատու են:

6) Բաժնետոմսերը կանխիկ և միանուազ վճարելի են, սակայն վարչութիւնը իր պատասխանատուութեան տակ կարող է մասնակի վճարումներ արտօնել անոնց որոնք կը փախաբին:

7) Բաժնետոմսերը անուանական են, անոնք կըրնան փոխանցուիլ արդէն բաժնետէր անդամի մը կամ

ընդունելութեան պայմանները լրացնող նոր անդամի մը:

8) Փոխանցումը կը կատարուի Ակումբի նախագահին մակադրութեամբը և կ'արձանագրուի դիւանատան յատուկ տոմարին մէջ:

9) Բաժնետէրի մը հրատարման կամ մահուան պարագային՝ անոր բաժնետոմսը կրնայ փոխանցուիլ կամ ուրիշ բաժնետէրի մը և կամ Ակումբի ընկերութեան եթէ այս վերջինը ուզէ: Բայց ընկերութիւնը միշտ բացարձակ իրաւունք ունի վերագնելու հրատարողին և կամ մեռնողին բաժնետոմսը՝ վճարելով անոր սկզբնական արժէքը:

10) Այն պարագային երբ վարչութեան կողմէ գող բեցուած բաժնետէր մը որոշեալ պայմանաժամին մէջ ընդհ. ժողովին չի բողոքէ, կամ երբ ընդհ. ժողովը վարչութեան վճիռը հաստատէ, (յօդ. Դ., հաս. 12) ընկերութիւնը իրաւունք ունի վերագնելու անոր բաժնետոմսը, նախորդ հատուածի արամագրութեան համաձայն:

11) Եթէ հրատարեալ, գողբեցուած կամ վախճանեալ անդամի մը բաժնետոմսին օրինական եղանակով գնորդ չներկայանայ, այդ բաժնետէրը կամ ժառանգորդը կը պահէ իր բաժնետոմսին գլխավճարի հատուցման իրաւունքը՝ բաժնետէր անդամներուն համահաւասար կերպով, բայց այս մասին ընդհ. ժողովոյ որոշումները՝ ինչպէս միւս բաժնետէրերուն՝ նոյնպէս և իրեն նկատմամբ վերջնական են:

### Վ Ա Ր Չ Ո Ի Թ Ի Ի Ն

Յօդուած Գ. — 1) Ակումբը վարելու իրաւունքը կը պատկանի մէկ կամ աւելի բաժնետոմսի տէր եզող անդամներուն միայն:

2) Բաժնետէրերու ընդհ. ժողովը կ'ընտրէ վարչութիւնը, որ կ'ստանձնէ վարչական բոլոր իրաւասութիւնները և օրինապէս պաշտօն ունի գործադրելու ընդհ. ժողովներով վաւերացուած կանոնները:

3) Առաջին տարուան համար, վարչութիւնը կ'ընտրուի ներկայ չլինակաւ կանոնադրի վաւերացման թրւականին՝ բաժնետոմսերու կէսը ստորագրող նախաձեռնողներու ընդհ. ժողովէն (յօդ. Գ. հաս. 3):

4) Վարչութիւնը կը բաղկանայ նախագահէ, դեր-նախագահէ, քարտուղարէ, գանձապետէ, համարակալէ և երկու խորհրդականներէ:

5) Վարչութիւնը կրնայ ի հարկին վճարեալ օգնական-քարտուղար մը ունենալ:

6) Նախագահը, որ կ'ընտրուի ուղղակի ընդհ. ժողովէն, կամ անոր բացակայութեանը փոխ-նախագահը, Ակումբի ընկ.ը կը ներկայացնէ իր արտաքին յարաբերութիւններուն մէջ. իսկ միւս անդամներուն պաշտօնները՝ վարչութիւնը ինք կը բաշխէ գաղանի քուէ-արկութեամբ:

7) Վարչութեան պաշտօնավարութիւնը մէկ տարի է. անդամները վերընտրելի են:

8) Վարչութիւնը նիստ կ'ընէ ամէն անգամ որ նախագահը կամ իր անդամներէն երեքը հարկ տեսնեն: Նիստերը օրինաւոր են երբ առնուազն 4 անդամներ ներկայ են:

9) Որոշումները կը տրուին ձայներու մեծամասնութեամբ՝ ձեռամբարձ քուէով և կամ գաղտնի քուէարկութեամբ՝ երբ անդամներէն մին պահանջէ: Ձայներու հաւասարութեան պարագային նախագահին ձայնը գերակշիռ է:

10) Մինչեւ 3 անդամներու հրատարման պարագային վարչութիւնը ինք կ'ընտրէ անոնց յաջորդները, որոնց պաշտօնը կը վերջանայ վարչութեան պաշտօնին հետ:

11) Վարչութիւնը իրաւասութիւն ունի ներքին կանոնադրով նախատեսուած պարագաներուն մէջ Ակումբին անդամակցութենէն զազրեցնելու ու է բաժնետէր կամ այլ կարգի անգամ:

12) Այսպէս զազրեցուած անգամը կարող է իրեն հաղորդուած որոշումին թուականէն մինչեւ մէկ ամիսը նոյն ժողովին գրաւոր կերպով ներկայացնելու իր բողոքը:

### ՀԱՇՈՒԵՔՆՆԻՉ

Յօդուած Ե.— Սովորական տարեկան ընդհ. ժողովը կ'ընտրէ նաև հաշուեքննիչ մը գաղտնի քուէով, որուն պաշտօնը կը տեւէ տարի մը և որ վերընտրելի է:

ԸՆԴՀ. ԺՈՂՈՎ.

Յօդուած 2.— 1) Ակումբին տարեշրջանը կը սկսի մարտ 1ին և կը լրանայ փետրվարի վերջը: Ամէն տարի մարտ ամսուայ ընթացքին կը գումարուի սովորական ընդհ. ժողովը:

2) Ընդհ. ժողովոյ հրաւիրագրերը վարչութեան կողմէ ստորագրուած, ժողովի գումարման թուականէն զոնէ շարաթ մը առաջ բաժնետէրերուն պէտք է հասցուին:

3) Սովորական կամ արտակարգ ընդհ. ժողովներուն կը նախագահէ վարչութեան նախագահը, կամ անոր բացակայութեանը՝ գեր-նախագահը:

4) Ընդհ. ժողովներու մէջ՝ մէկ բաժնետոմսը մէկ ձայնի իրաւունք կուտայ, երկու բաժնետոմսը՝ երկուքի. 3, 4 կամ հինգ բաժնետոմս ունեցողը երեք ձայնի իրաւունք կ'ունենայ, 6, 7 կամ 8 ունեցողը 4 ձայնի, իսկ անկէ աւելի ունեցողը 5 ձայնի:

5) Քուէից հաւասարութեան պարագային նախագահի ձայնը գերակշիռ է:

6) Ընդհ. ժողովը օրինաւոր է երբ ներկայ անգամները ստորագրուած բաժնետոմսերուն զոնէ 1)3ը կը ներկայացնեն: Նամակաւ կամ փոխանորդութեամբ տրուած քուէները չեն ընդունուիր:

7) Ընդհ. ժողովներու ատենագրութիւնները կ'ամփոփուին մասնաւոր տոմարի մը մէջ: Այն անգամները



որոնք կ'ուզեն տեղեկանալ՝ կրնան դիմել քարտուղարին:

8) Տարեկան ընդհ. ժողովին, վարչութեան կողմէ կը ներկայացուի վերջացող շրջանին տեղեկագիրը և հաշուեկշիռը:

9) Ընդհ. ժողովէն վաւերացուած հաշուեկշիռ մը վերջնական և անտարկելի կը դառնայ ներկայ կամ բացակայ բոլոր անդամներուն համար:

10) Արտասովոր ընդհ. ժողով կը գումարուի երբ բաժնետոմսի 1)4ը ներկայացնող անդամներ գրաւոր պահանջ ներկայացնեն վարչութեան, և կամ երբ ինքը վարչութիւնը՝ հարկ տեսնէ: Երկու պարագային ալ օրակարգը պէտք է ծանուցուած ըլլայ հրաւիրագրին մէջ:

11) Եթէ ընդհ. ժողովոյ ուէ նիստին, ատաջին հրաւերին վրայ նրէ հատուածին համաձայն մեծամասնութիւն չի գոյանայ, առնուազն 8 օր վերջ ժողովը կրկին կը գումարուի և այս նիստը օրինաւոր կը համարուի, ինչ որ ալ ըլլայ ներկաներու թիւը, պայմանաւոր ատաջին անգամի օրակարգէն դուրս խնդիրներու մասին որոշումներ չի տրուին:

12) Այս կանոնագրին փոփոխութիւնը կամ յօդուածներու ջնջումը կրնայ կատարուիլ միայն բացառիկ ընդհ. ժողովի մը մէջ: Առաջարկուած նոր պատճէնը պէտք է ընդհ. ժողովէն 8 օր ատաջէն կախուած ըլլայ Ակումբին մէջ, մասնաւոր տախտակի մը վրայ: Այս ժողովը օրինական ըլլալու համար՝ պէտք է որ արձանագրուած բաժնետոմսերու 3)4ը ներկայացուած

ըլլան և որոշումները առնուին ներկայ անդամներու ձայնին 2]3ովը:

13) Եթէ վերոյիշեալ մեծամասնութիւնը չի գոյանայ, Ակումբի նախագահը ներկայ անդամներու կարծիքը պիտի արձանագրէ և ընդհ. ժողովի շարունակութիւնը պիտի յետաձգուի առնուազն ութ օր՝ առանց անհատական հրաւերի: Այս ժամանակամիջոցին մէջ բաժնետէր անդամները պիտի հրաւիրուին մասնաւոր տախտակի մը վրայ փակցուած յայտարարութեամբ մը՝ տեղեկանալու քարտուղարի մօտ ընդհ. ժողովոյ որոշելիք նիւթին՝ և արձանագրելու իրենց համամտութիւնը կամ մերժումը՝ «ընդունուած» կամ «մերժուած» բառերով՝ իրենց ստորագրութեամբ միասին: Ընդհ. ժողովի շարունակութեան համար որոշուած թուականին՝ այն անդամները որոնք իրենց կարծիքը յայտնած են ըլլայ նախորդ ընդհ. ժողովին մէջ, ըլլայ քարտուղարին մօտ, պիտի հաշուուին վերոյիշեալ 3]4ի մեծամասնութեան կազմութեան մէջ:

14) Նոյնպէս, ընկերութեան կանխակալ լուծումը կրնայ յայտարարուիլ միայն բացառիկ ընդհ. ժողովի մը մէջ, ի ներկայութեան բաժիններու 3]4ին և ներկայ ձայներու 2]3ի մեծամասնութեամբ: Եթէ պահանջուած 3]4ի թիւը չի լրանայ՝ 13րդ հասուածի նախատեսուած ձեւով պիտի ընթացուի:

## ՀԱՍՈՅԹՆԵՐՈՒ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆ

Յօդուած Է.— 1) Ընդհ. ժողովը կ'որոշէ առաջիկայ տարեշրջանի ելեւմտացոյցը վարչութեան առաջարկութեանը վրայ:

2) Եթէ վերջացող շրջանը հասութից աւաւելութիւն ունենայ՝

ա՝ 100ին 25ը կը յատկացուի բաժնետոմսերու վելխալիարի պահեստի դրամագլխին, որ երբ սկզբնական գրամագլխին կէսին հասնի, ընդհ. ժողովի ուղղամարտից գումարին կէսը կը յատկացուի բաժնետոմսերու արժէքին 1)4ին հասուցմանը, և այսպէս շարունակաբար:

բ՝ 100ին 25ը կը յատկացուի մասնաւոր պահեստի գրամագլխին, վերագահուած բացառիկ պատահականութիւնները գիմալրաւելու և որուն գործածութիւնը կ'որոշուի ընդհ. ժողովով:

գ՝ Մնացեալ 100ին 50ը յաջորդ տարուան պիւտճէին հասոյթից կողմը կ'արձանագրուի և կը յատկացուի Ակումբի առձեռն գրամագլուխին (fonds de roulement) և ի հարկին՝ անոր բարեգարգմանը և կամ իր նպատակին աւելի ընլարձակ սահմանի մէջ գործադրութեանը:

## ՏԵՒՈՂՈՒԹԻՒՆ ԵՒ ԼՈՒԾՈՒՄ

Յօդուած Ը.— 1) Ընկերութեան աւելուցութիւնը 6

տարի է, բայց կրնայ կորճնալ կամ երկար սձգուիլ ար-  
տաստօր ընդհ. ժողովով:

2) Եթէ արատատօր ընդհ. ժողովը ներկայ բաժնե-  
ատէրերուն շնչին ձայնովը լուծման սրոշում տայ, ըն-  
կերութեան գոյքերը կը վաճառուին և հասոյթին կը  
հասուցուին նախ սրբաքերը՝ եթէ կան, յետոյ բաժ-  
նեատէրերուն ձեռքը գտնուած բաժնետոմսերը ատատուելն  
իրենց սկզբնական արժէքով, և այն սպասուածքին սր  
մնացորդ մը սեւինայ՝ կամ սերիչ բարեն գատակ հաս-  
տատութեան մը կը նուիրուի, և կամ կը յանձնուի Ազգ-  
Առաջնորդարանին՝ ազգային նմանօրինակ հաստա-  
տութեան մը յատկացուելու համար:


### ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆ

Յօդուած Թ.— 1) Ընկերութեան բաժնեատէր ըլլա-  
լը կամ Ակումբին ս և է կարգի անդամ արձանագրուի-  
լը կ'ենթադրէ ընդունած ըլլալ ներկայ կանոնագրու-  
թիւնը:

2) Ակումբին անդամակցող մը կանխու կը հրա-  
ժօրի Ակումբի գործերուն աթիւ գատարան գիմերու  
իրատունքէն, ըլլայ անոր անդամներուն զէմ անճատա-  
բար, ըլլայ անոնց հաւաքականութեանը զէմ, ըլլայ  
վերջապէս իրենց սրոշտօնի հանգամանքով՝ վարչու-  
թեան մէկ անդամին կամ անոր նախագահին զէմ:

3) Ընկերութեան ընդհ. ժողովը անոր վերապայն  
տանանն է և իր վճիռները վերջնական և անվերաբըն-

նելի են Ակումբը շահ պրպտող բոլոր խնդիրներուն,  
անդամներուն հանդէպ անոր բարոյական և նիւթական  
յարաբերութիւններուն և սոճասարսկ այն ամէն բա-  
ներուն մէջ որ ներկայ գաշինքին գործադրութեանը  
և բարեփոխութեանը կը վերաբերին և կամ ազգազա-  
յին կրնան կարրադրուիլ կանոնադիրներու կամ հրա-  
հանդներու անուան տակ:



ՆԵՐՍԱՅ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐՂ ՎԱԵՐԱՅՈՒԱԾ Է ՆԱ-  
ԵԱԶԵՈՒՆՈՂ, ԲԱԺՆԵՏԷՐԵՐՈՒ 1916 ՄԱՐՏ 26ԻՆ ԳՈՒՄԱ-  
ՐԱԾ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԷՆ:

### ՆԱԿՍԶԵՈՒՆՈՂ ԱՆԴԱՄՆԵՐ

Աբրահամեան Վաղարշակ	Իմիրզեան Շաւարժ
Անտոնեան Սիմօն	ձեփանիբեան Ալիսան
Բարսղեան Էօժէն	Նասիպեան Հրանդ
Բարսղեան Ժիւլ	Ռեսեան Աբգար
Գաապարեան Մելիսե	Սբենեան Յովսէփ
Գլրնեան Գառնիկ	Փափազեան Յակոբ
Թելեան Միհրան	Տափաւեան Միհրան
Թեկեան Վահան	Տիլէկեան Հրանդ



ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ

# ՀԱՅ ԱԿՈՒՄԲԻ



Յօդուած Ա. — Հայ Ակումբի անդամները չորս կարգի կը բաժնուին.

1) Մնայուն անդամներ. Բաժնետէր կամ ոչ-բաժնետէր, որոնք Ազեքսանդրիա հաստատուած են:


2) Անդամակիցներ՝ որոնք Եգիպտոսի մէջ կը բնակին և Ազեքսանդրիա հաստատուած չեն:

3) Անդամակիցներ՝ որոնք այնպիսի ազգ. հաստատութեան մը կ'անդամակցին, որ փոխադարձութեան վրայ հիմնուած համաձայնութիւն գոյացուցած է Հայ Ակումբին հետ:

4) Առժամեայ անդամներ՝ որոնք Ազեքսանդրիա հաստատուած են և կամ առժամանակեայ կերպով հոն կը գտնուին:

Վարչութիւնը իրաւունք ունի սահմանափակելու ո և է կարգի պատկանող անդամներուն թիւը:

Յօդուած Բ. — Մնայուն անդամ ընդունուելու համար պէտք է 20 տարեկան ընդունուելու քաջամարտիկ ըլլալ:



Ամէն թեկնածու պէտք է ներկայացուի երկու մնայուն անդամներու կողմէ:

Իբրեւ անգամ ընդունուելու խնդրանքները քարտուղարը կ'արձանագրէ մասնաւոր սումարի մը մէջ, ստորագրուած ներկայացնող երկու անդամներուն կողմէ:

Թեկնածուին, ինչպէս նաև զինք ներկայացնող երկու անդամներուն անունները 5 օր կախուած կը մնան Ակումբի սրահին մէջ:

Այլ 5 օրուայ ժամանակամիջոցին՝ ու է անգամ կրնայ գրաւոր գիտողութիւն ընել վարչութեան ներկայացող անձի մասին: Ասկէ վերջ իր ընտրութեան կը ձեռնարկուի վարչ. ժողովին կողմէ. եթէ մերժուական քուէ ստանայ՝ ներկայացող անձը աւժամեայ կերպով կը մերժուի, բայց կրկին կրնայ ներկայանալ 3 ամիս յետոյ. եթէ երկրորդ անգամ ալ մերժուի՝ այլ ևս չի կրնար նոյն տարւոյն մէջ ընտրուիլ:

Յօդուած Գ. — Անդամակիցներ: Ամէն հայ որ եզրպատտի մէջ կը բնակի և պահանջուած պատուաւորութեան հաւաստիքը կ'ընծայէ, կրնայ իբրեւ անգամակից ընդունուիլ, վճարելով տարեկան 100 զրուշ տղի անդամավճար մը, միանուսպ և կանխիկ: Իր ընդունուելութիւնը կը վճուի վարչութեան կողմէ:

Գալով օտարականներուն, որոնք պէտք է ներկայացուին երկու անդամներու կողմէ, անոնց ալ ընդու-



Ներութիւնը իբրև անդամակից կամ աշխատեայ ան-  
զամ՝ կ'որոշուի վարչութեան կողմէ:

Յօդուած Գ. — Աստամեայ անդամները պէտք է ներ-  
կայացուին երկու մնայուն անդամներու կողմէ, որոնք  
քարտուղարէն պիտի խնդրեն մտից տոմս մը, զոր  
վարչութիւնը ձրի կուտայ միայն 8 օրուան համար:

Սոյն ժամանակամիջոցի աւարտումին՝ ներկայա-  
ցընող երկու մնայուն անդամներու խնդրանքին վրայ՝  
վարչութիւնը իրաւասութիւնը ունի կրկին 8 օրուան  
համար նոր ձրի տոմս մը ևս յանձնելու, որմէ վերջ  
ներկայացող առժամեայ անդամը, եթէ ուզէ շարունա-  
կել յաճախել Հայ Ակումբ՝ պարտի կատարել Յօդ. Բ. ի  
տրամադրած ձեւակերպութիւնները, որոնք կը վերա-  
բերին մնայուն անդամի ընդունելութեան:

Յօդուած Ե. — Այլելուներ: Եթէ Ազեքսանդրիա բը-  
նակող կամ իբր անցորդ հոն գտնուող անձի մը, Ա-  
կումբի մնայուն անդամի մը ընկերակցութեամբ, պա-  
տահական պարզ այցելութիւններու վրայ է խնդիրը՝  
բաւական է իւրաքանչիւր անգամուն արձանագրու-  
թիւն մը կատարել առ այս յատկացուած մասնաւոր  
տոմարի մը մէջ:

Ակումբի անդամներուն և անդամակիցներուն աի-  
կինները Ակումբի հիւրասրահին մէջ կ'ընդունուին,  
և սակայն վարչութիւնը իրաւասութիւն ունի սեղ-

մումններ դնելու անոնց այցելութեան օրերուն և ժա-  
մերուն մասին:

Վարչութիւնը, եթէ յարձար դատէ, կրնայ առժա-  
մաբար Ազգ. քասնդրիս գանուող յայտնի անձերու զըր-  
կել հրաւեր մը որ իրենց ազատ մուտք կուտայ Ա-  
կումբի սրահներուն մէջ:

Յօդուած Զ. — Մնայուն անդամներու համար տա-  
րեկան բաժնեկիւնը 240 դրչ. է, կանխիկ ամսավճար-  
ներով:

Գալով այն անդամներուն որոնք կը պատկանին  
Քլիւպի մը, Ակումբի մը և կամ ազգ. այնչիտի հաս-  
տատութեան մը որ Հայ Ակումբին հետ փոխադարձու-  
թեան հիման վրայ համաձայնութիւն մը ունի, անոնց  
մասին պիտի գործադրուին իրենց պատկանած հաս-  
տատութեան հետ կայանալիք պայմանները:

Վարչութիւնը իրեն կը վերապահէ, ո և է ատեն,  
բաժնեվճարները ինչպէս նաև սակագիները փոխելու  
իրաւունքը:

Յօդուած Է. — Այն անդամները որոնք երեք ամիս  
չարունակաբար չեն վճարեր իրենց բաժնեվճարը, քար-  
աուղարին կողմէ՛ զբաւոր ազգարարութիւն մը կը ստա-  
նան: Եթէ այս միջոցը ապարդիւն մնայ՝ անուննին կը  
ցուցադրուի և չորրորդ ամսուն վերջ՝ վերջնականա-  
պէս կը հրաժարեցուցուին:

Այս կերպով հրաժարեցուող անդամը ներկայա-

ցընող երկու անձերը պատասխանատու են իրենց թեկ-  
նածուրի բաժնեվճարներուն, մէկ տարուան համար մի-  
այն, սոյն ներքին կանոնադրութեան տպագրութեան  
և ցրուումի թուականէն յետոյ:

Գալով բաժնետէր անդամներուն՝ վարչութիւնը,  
եթէ ուզէ, կրնայ կանոնադրի Գ. յօդուածը (հատ. 11)  
գործադրել անոնց հանդէպ և յիանալ ամսավճարները  
անցնել բաժնետէր անդամի սարաքին, առհաշիւ իր  
բաժնեթղթի վրայ ստանալիք զլիսավճարին:

Յօդուած Ը. — Ակումբէն հրաժարած մնայուն կամ  
ոչ-մնայուն անդամները կրնան նորէն ընդունուիլ, ըն-  
դունելութեան համար հաստատուած պայմանները կըր-  
կին լրացնելէ վերջ:

Յօդուած Թ. — Վարչութիւնը իր հարկ դատած բո-  
լոր միջոցները ձեռք կրնայ ստնել կարգ ու կանոնի  
պահպանման համար: Կանոնադրի մեկնաբանութեան,  
ինչպէս նաև անդամներու միջև ու է վէճի միակ դա-  
տաւորը ինքն է:

Յօդուած Ժ. — Պատուի և պատշաճութեան հանդէպ  
ժանր թերացումի սարապային, վարչութիւնը իրուա-  
սութիւն ունի խնդրոյ առարկայ անդամին հանդէպ  
կանոնադրի Գ. յօդուածը (հատ. 11) գործադրել:

Յօդուած ԺԱ. — Անդամները սարտաւոր են կան-  
խիկ վճարել սպառումի կամ ու է ուրիշ ծախքերը:

Յօդուած ԺԲ.— Վարչութեան կը պատկանի որոշել այն խաղերը որոնք կրնան Ակումբին մէջ խաղացուիլ:

Խաղերը հակողութեան տակն են պատուիրակի մը՝ որ կ'անուանուի վարչութեան կողմէ:

Խաղերու սակազմարումները կ'ըլլուին կանխիկ, սրահին մէջ կախուած սակացօցիին համաձայն:

Ակումբի վարչութեան կողմէ կարգուած պատուիրակը վարչութեան հետ խորհրդակցելէ և անոր հաւանութիւնը ստանալէ վերջ, իրաւունք ունի, խաղացողներուն պարտաւորել իր օգտակար դատած սեղմումները, և ի հարկին, խաղասրահէն հեռացնել ո՛վ որ ալ ըլլայ:

Խաղի վերաբերեալ ո և է վէճի կամ հակառակութեան պարագային վերջին խօսքը վարչութեան կը վերաբերի և անոր տուած որոշումը անդառնալի է երկու կողմերուն համար:

Յօդուած ԺԳ.— Առանց վարչութեանէն նախապէս արտօնուած ըլլալու, արգիլուած է ո և է յայտարարութիւններ, թղթատարեր (brochures), հանգանակութեան ցուցակներ կամ ուրիշ վաւերաթղթեր ցուցագրել Ակումբի սրահներուն մէջ:

Յօդուած ԺԴ.— Արգիլուած է, ո և է առթիւ, անհատական կշտամբանքի ենթարկել Ակումբի ծառայողներուն:

յողները: Անոնց պէմ գանգատ մը ունեցողը պէտք է գրաւոր կերպով յայտնէ քարտուղարին:

Ու է պիտողութիւն նկատի առնուելու համար պէտք է գրաւոր ներկայացուի վարչութեան:

Յօդուած ԺԵ.— Բացարձակապէս արգիլուած է, ու է պատրուակով թերթեր, գիրքեր կամ թերթատերեր Ակումբէն դուրս տանիլ:

Ակումբը պատասխանատու չի կրնար ըլլալ առարկայի մը կորսուելուն, նոյն իսկ եթէ զոնապանին կամ Ակումբի մէկ պաշտօնեային յանձնուած ըլլայ ան:

Յօդուած ԺԶ.— Ներկայ կանոնադրութիւնը պարտաւորիչ է Ակումբի բոլոր անդամներուն համար եւ վարչութիւնը պարտի հսկել անոր գործադրութեան կէտ առ կէտ:

Յօդուած ԺԷ.— Ակումբը բաց է ամէն օր առաւօտեան ժամը 9էն մինչեւ գիշերուան 12.30:

Այն անդամները որոնք գիշերուան 12.30ին Ակումբէն չեն հեռանար, վարչութեան կողմէ առ այդ որոշուելիք բացառիկ տուրքի մը կ'ենթարկուին:





---

Տպգր. ԱՐԱՄ ՄՏԵՓԱՆՅԱՆ - Ապուստոսար, 16, Աղեխանիզիա